

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՑ

ԶՈՐ ԱՐԱՐԵԱԼ Է ՏԵԱՌՆ ԳՐԻԳՈՐԻՍԻ ԱՐՇԱՐՈՒՆԵԱՅ ՔՈՐԵՊԻՍԿՈՊՈՍԻ¹

Ա. — Զհարկ բանիս զոր պահանջեցեր յինէն փութապէս յաղագս աստուածային ընթերցումոցն, ով կամսարականդ վահան պատրիկ, հատուցի բեզ յամբազոյն, ոչ ի հարուստ մտաց ուրուք ժողովեալ, և ոչ ի բարձրագոյն բանից յառաջագոյն ուսեալ, այլ յաշխատութեանց աղքատ իմոց խորհրդոցս գտեալ նուազստ ասացուածովք։ Եւ վասն այսորիկ հեղգ առ այսպիսի փոյթս գտայ յառաջագոյն, զի մի նուաղ զպայծառ ջան իմաստութեանս եկեղեցւոյ երեւեցուցից, և կամ տխուր զվայելուչ զգեղեցկութիւն խորհրդոյս։ Վասն զի ուժաւորաց ումանց, և հոգեւորաց յառաքինութիւնն պատշաճ վարկայ զգործս զայս։ Բայց վասն զի այր ես մեծ և ողջախոհ մտօք, պսակեալ ծերութեամբ և իմաստութեամբ, իբրեւ թագաւոր յԱստուծոյ ի ժամանակիս ի միջի մերում, և յորդորական հրաման տէրութեանդ քո միշտ մտրակեաց զիրաւացի հեղգ երկչոտութիւն մտաց իմոց։ Որ իբրեւ ահագին իմն խորոց հանդիպել իմաստութեան ընթերցումոցն, ցնորեցայ ի խորհուրդս, և պակուցեալ ի փախուստ դարձայ բազում անգամ ի հնազանդութենէ այսպիսի հրամանաց, իսկ այժմ վերստին հասելոյ հրամանիս քո ոչ կարացեալ ի դիմի հարկանել, ուստի խուսափէին յառաջագոյն իբրեւ յալեաց ծովու։ այժմ ի նոյն դարձեալ զիմեցի, վատահանալով ի շնորհս հոգւոյն սրբոյ։ ոչ գիտեմ հնազանդութեամբ թէ յանդգնութեամբ, սակայն զիմեցի իբրեւ

ի դրախտ ինչ գեղեցկատեսակ Աստուծոյ տեսչութեամբն առ մարդն, լի գանազան պտղովք Քրիստոսի փրկութեան խորհրդովք։ Ընդ որոց անբաւութիւն մարդասիրութեանն շուրջ գալով ի խորհուրդս, քաղեցի ըստ իւրաքանչիւր մարգարէական ոսրոյ¹ Քրիստոսի փրկութեանն պտուղս, զոր կարգեցի սկսեղ պատմութեան բանիս ընծայելով ի սեղան քաջախորհուրդ իմաստութեանդ քո։ Զի ընկալեալ զհնազանդութիւն յօժարութեանս իմոյ ըստ կարի զոր ինչ ընծայեցիս և իբրեւ խոհեմ անձն և զօրաւոր մտօք տկարութեանս իմոյ և կամ յանդգնութեանս ներեացես։

Բ. — Թե՛ զինչ խորհուրդ ընթերցումոցն² համառօտ բանիւ։

Բայց նախ զայս գիտասցես քաջ բանասիրաց և լսասէր յաստուածայինսն թէ ջան վաստակոցս մերոց է այս ցուցանել ընթերցումովքն թէ ի սկզբանն երկու աշխարհք, հաստատութեամբ երկնիս, բաժանեցան իմանալի և զգալի բնակչօք։ և սոցա երկոցունց մարդս իբրեւ մի զուռն երկրացիկ հայելի յերկուց բնութեանց գոյացաւ, յոգւոց և ի մարմնոց, որ յինքն բարձեալ ունի զամենայն արարածս, և թէ սոքա երկուքս որ ըստ պատկերի Աստուծոյ ստեղծան, և երկուց աշխարհաց սքանչելի տիպք յօրինեցան, երկուս և զօրհնութիւն որդեծնութեան և զպատուիրան պատիւ ընկալան զոր ոչ պահեցին վասն որոյ երկուքին երկուս պատուհասս յին։

քեանս ձգեցին, յորոց Քրիստոս յերկոցունց ինքեամբ զմեզ ապրեցոյց լինելով իբրեւ զմեզ, և եթէ եկեղեցի զայս երկուս տօնս տաւնէ զծննդեանն Քրիստոսի և զյարութեանն։ Զծննդեանն, վասն կնոջն փրկութեան և զյարութեանն վասն առնն։ Եւ թէ որպէս զերկուսին միմեամբ կատարէ նախ զյայտնութիւնն յարութեամբն և զմեր փրկութիւնն ի ներքս պարհէ մկրտութեամբն և յարութեամբն, և զթշնամուցն կործանումն։ Եւ ապա զյարութիւնն տօնէ մկրտութեամբն, և նոյնպէս զմեր փրկութեանն լուսաւորութիւն մկրտութեամբ և յարութեամբ և թշնամուցն կործանմամբ ի ներքս բերէ։

Եւ բաժանեալ է գնոյն խորհուրդ յերկուս մասունս։ ի յայտնութիւնն, ի յարութիւնն, և յաղութեանցն ընթերցումս ի չորեքշաբաթսն և յուրբաթսն։ Եւ ունին չորեքշաբաթսն ընթերցումք զյայտնութեանն խորհուրդ, և ուրբաթսն զյարութեանն։ Եւ կատարեն ի զատկին ընթերցումս, և այսպէս երկու տօնքս երիցս երկուք ընդ միմեանս անցանելով պայծառացուցանեն զմեք փրկութիւնն յերկուս իննեակս, և վասն այսորիկ թէ նոյն բանք բազում անգամ յեղեղուն, ոչ անգիտութեան է այլ հարկի, զի ոչ թողուլ արժան է և ոչ թերի պահել զխորհուրդն, այլ միմեամբք զմիմեանս աւարտել։

Գ. — Թե՛ որպէս յաղագս մարդոյն երկիր և ծով իւրովք զարդուն և ձկնորովք ի ձկնե հաստատութեան երկնիս յառաւորքն հանդերձ բաժանեալ յառաջին երկնե¹ երկրորդ աշխարհ գոյացաւ ի փառս և ի գովուրդն արարչին։

Եւ արդ ունի խորհուրդ ընթերցումոցն յայտնել նախ զայս միտս որքան իմ տկարութիւնս հասու եղեւ։ Զանճառ Աստուծոյ իմաստութեանն գործ։ հրաշալի նախախնամութեան յօրինումովք առ մարդն, որպէս զի յաղագս նորա լինել նիւթական արարածոցս ի պատիւ ինքեան և ի գովութիւն արարչին, որ է լինելութիւն երկնի և երկրի ծովու և որ ի նոսա սքանչելի

գործք արուեստաւոր բանին որպէս եղելութիւն լուսոյն կարգաւորութեամբ տուրն։ ջեան և զիշերին² ի բաւանդակութիւն ասուրն։

Նոյնպէս և հաստատութիւն երկնին խորանաձեւ շրջաբերեալ զոյգ ծովու և ցամաքի, որպէս պայծառութիւն արեգական, լուսնոյ և աստեղաց, մերկեաց զերկնն վերին և զլոյծ բնութիւնն ջուրց ի միմեանց և ծովս և գնացս գետոց աղբերօք հանդերձ, երկրորդ աշխարհն նիւթական բացայայտեաց ցուցանելով զծաղկածին ցամաքն, որ հրամայեցաւ բուսովք և պտղաբեր տրնկովք, և անտառախիտ մայրեօք ընուլ լեռանց դաշտաց ձորոց, և կղզեաց ծովու։ Յուցանելով ինքնազարդ գեղեցկութիւն, ընդ նմին և ջրածին զուղակացն, սողնոց անբաւից, գազանաց մեծամեծաց և փոքունց, և ահագին վիշապաց ի ջուրցն հրամայեցաւ ընուլ զջուրս ամենայն։ Ուստի և թռչնոցն տարմբ ելեալ, լցին զծովացեալ օդս ի վերայ երկրի որ կոչի շաղկապ զրաց ի հաստատութեան երկնի, նովին հրամանաւ և երկրի հանեալ շունչ կենդանի, գազան և անասուն և սողուն երկրի, որով կրկնապատիկ զարդարեցան երեսք երկրի առ ի ցուցանել զառաւ արարչին ամենահնար մեծութիւնն, ի բոյսս և ի զգայական կենդանիսս։

Դ. — Թե՛ այսպիսի գեղեցիկ և բարի առարած կեկոյանիքս ի հակառակաց միասցեալք առանց մարդոյն անկատարք էին առ իմանալիսն րեպետ և բազում բարոյք և կարօք ի բնութեանն յօրինեալք էին։

Եւ զոր օրինակ չորք տարբերս հակառակ նիւթովք բաժանեալք, և գեղեցկախառն յարմարութեամբ արարչին միաւորեալք ընդ միով յարկաւ, և լուսով փակեցան ի միոյ տան բաւանդակութիւն։

Այսպէս և ծնեալ կենդանիքն ի նոցանէ և ի նոցունց ծոցս զարմանեալք զզուղակացն ասեմ և զթռչնոց և զեռնոց զգա-

1. Այսպէս ունի ձեռագիրքս թերեւս ըլլայ ոստոյ, կը մնայ իբրեւ ստուգելի բառ։

1. Զհագեղին ունի՝ երկնեւ։

2. Վերջին գրեթէ անընթեանի։

զանազան և զանազանոց և որ սողին ի նոսա-
թէպէտ և որոշեալը են ի միմեանց բա-
զում զանազանութեամբ. տեղեօք, տե-
սակօք գունոց և ձեւոց, և ձայնից,
որպէս ինքզինք և անգէնք երեւեալը,
մեծամեծը և փոքունը, գովելիք գունով և
ձայնիւ նոցին ընդդիմահարօք. նոյնպէս
բազմաբարոյք քաղցունը, ահաւորահա-
յեացք, անդուք, ետեղակացք. ճանապա-
հորդք ի պէտս, ամբարաբերք պարենա-
պահք, երկակենցաղը ջրոյ և ցամաքի,
իբրու դրացիք, մուտ և ել առնելով ի
միմեանս, բազմահոյլք և սակաւերամբ,
պակասապէտք և յոլովակերք, նախան-
ձոտը և սիրունը, դրժողը և միամիտը,
նախագուշակը և անգէտը. և այլեւս ան-
բաւ բարոյիւք բաւանդակեալք ի միմեանց,
որպէս և բոյսը և տունիք համօք և հո-
տիւք և գունովք:

Սակայն ամուսնութեամբ յօրինեալք ի
միմեանս արու և էգը երեւեցան ամենեքեան,
տարածելով ընդ բոլոր երեսս երկրի, յա-
լուցս ծովուց և գետոց յանտառս լերանց,
ի քարածերպս վիմաց դնել բոյնս, առնել
ծնունդս անունդ սիրոյ, գործովս զբանաց,
խանդաղատանս ձայնի, շուրջ անցանելով
փարին պատին զծննդովքն իբրեւ ի գիրկս
բերելով կերակրեն ինքեանց և արտաքուստ
առնել ազգս ջուկս հարազատաց, առանց
տանց և քաղաքաց կենցաղավարեալք զօ-
րէն մարդկային բնութեանս:

Զօրօք և զօրապետօք առաջնոր-
դեալք կարգօք և օրինօք հաստա-
տեալք յիւրաքանչիւր սահմանս կայենից,
ջրոց և արօտից ցուցանեն յայտնապէս
իմաստնոց, թէ ընդ միով կենդանութեամբ
և զգայութեամբ կարգեալ են. ի միոյ կա-
մաց արարչին լրումն և հնազանդութիւն,
որ հակառակօք և հակառակացն ի մի
քաջայարմար գեղեցկութիւն կատարեաց
զերկին և զերկիր և զամենայն զգարդ
նոցա, ըստ այնմ եթէ Խտես Աստուած
զամենայն զոր արար և ահա բարի են
յոյժ: Եւ արդ թէպէտ և այսպէս վայելուչ
յարմարեցաւ տունս այս ընտանի իւր բը-
նակչօք, սակայն կարօտանաց մարդոյն

լինելութեան, իբրեւ անդամք .գլխոյ և
արքունիք թագաւորի, որպէս զի լիցին և
նոքա ի ձեռին նորա փառաւորիչը ա-
րարչին:

Ե. — Թե մարդոյն լինելութեամբ հաշտու-
րեաց զգալի աշխարհս ընդ խմանայիսն:

Եւ զայս խորհեցեալ բարերարին յա-
ռաջագոյն, առնէ զմարդն ըստ պատկերի
իւրոյ մտաւոր և բանաւոր, իբրեւ զիմա-
նալիսն յիմանալի լոյս բնակեալ, մերձ
յանմերձանալի լոյսն. և արու և էգ ըստ
զգայականացն, որոց և գլուխն հանդիպե-
ցաւ իբրեւ հաղորդ նոցուն առաջնորդու-
թեամբ. և ածէ զնա ի դրախտ իբրեւ թա-
գաւոր յարքունիս, հանդերձ թագուհեաւ,
զի եղիցի որպէս փեսայ առ հարսին ու-
րախացեալ ի ներքուստ. և իբրեւ զթա-
գաւոր սպասաւորեալ յորոց իշխիցենն
արտաքուստ. և այսպէս աճեցուցեալ ա-
րարչական բանին ի նիւթականացն բու-
սականս և զգայականս յաւելուածութեան
կարգաւ մինչեւ ի մարդն բանաւոր որ ըստ
պատկերի արարչին ելից զտունս զայս և
հաւասար առաջնոց և իմանալի տանն յօ-
րինեաց, ի միոյ արարչի մի փառաւորու-
թիւն բաւանդակեալով:

Զ. — Թե որպէս օրհնի մարդն որդե-
ծնութեամբ. և կրկին պատիւ զպատուիրանն
ընդունի որովք խաբեալք ի չարէն վերջա-
տիւն հանդիպման մարդասիրտքեան:

Արդ որպէս երկուց աշխարհաց մեծա-
մեծաց իմանալի և զգալի բնակչաւք բա-
ժանելոց ի միմեանց զերկուսս զայտասիկ
եցոյց բանս, կապէ իբրեւ անկիւն երկուց
որմոց զարուն և զէգն, որք զօրէն հայե-
լեաց և կամ պատկերաց, ոյք ի նոսա
հային, զբովանդակն յինքեանս ունին տը-
պաւորեալ, թէ զվերին և զիմանալիսն
կամիս տեսանել, զհօգին, իսկ եթէ զնիւ-
թականն և զզգալիսն զմարմինն: Այսպէս
և զերկուսս զայս իբրեւ միջասահման
եղ եղելոցն կատարումն և լինելոյ մարդ-
կան ծննդոցն սկիզբն զորս և աղբիւ-

րացոյց աւրհնութեամբքն, աճել բազմա-
նալ և ընուլ զերկիր, որով կարողն լինէին
տիրել ձկանց ծովու, թռչնոց երկնից,
զազանաց և անասնոց և որ սողին ի
վերայ երկրի, սոքա երկու, և որ զպահ-
պանութիւն պատուիրանին կրկին պատիւ
ընկալան, իբրեւ զհաւը և զբարերարի չճա-
շտիկ ի նոցա ի փայտէն գիտութեան բար-
ւոյ և չարի:

Ծննդեանն օրհնութեան կինն: Եւ զմահ
ապականութեան անվախճան կենացն այլն.
յորոց միածին որդին Աստուծոյ ընքեամբ
զմեզ ապրեցոյց յերկաքանչիւրոցն:

Ը. — Թե որպէս ըստ յանցանացն մար-
դոյն ազատեաց նախ զկիկն և ապա
զայրն, և քե որպէս զչարն խորտակեաց:

Արդ որ էրն Աստուած ճշմարիտ ի Հօրէ,
եղեւ մարդ ճշմարիտ ի կուսէ. և մկրտե-
ցաւ զի զկնոջն ծննդեանն անէծսն լուծցէ,
և զմեզ որդիս Աստուծոյ վերստին նորո-
գեսցէ մկրտութեամբն և զորջացելոյ վի-
շապին ի ջուրսն փշրեսցէ զգլուխն, և
կանանց ազգի ծննդովք իւրովք զյաղթա-
կան օրհնութիւնն պարգեւեսցէ նոյնպէս
և չարչարանօք մահու խաչի յարութեամբն
զի զնախահօրն բարձցէ զանէծս, և մեզ
ի մահուանէ վերստին յարութեամբն իւրով
ի մահուանէ վերստին յարութեամբն իւրով
զանմահութիւն ընդհանցէ, և խափանեսցէ
զսատանայ որ զիշխանութիւն մահուն ու-
նէր, մերկ ցուցանելով զիշխանութիւնս և
զպետութիւնս, որ զառաջին մարդն մեր-
կացոյց ի փառաց, յայտ յանդիման խաչ-
տառակեաց: Որպէս զօճն յանապատին
նշառակեալ զնոսա յանձին իւրում յարու-
թեամբն իւրով. և Աղամայ և որդւոց իւրոց
ամենայն արարածովք վերստին ընդ հրեշ-
տակս փառաւորիչս լինել արարչին յար-
դարեսցէ ընդ նմին յարուցեալք և նստեալք
յերկնաւորս ի Քրիստոս:

Զայս և յինքեան եցոյց երկուս աղբիւրս
փրկութեան, բանալով զկողն արեան և
ջրոյ, զի որպէս Աղամ յիւր կողմն որ
շինեցաւ կին ծնաւ զորդիս մարդկան:

Նոյնպէս և փրկիչն զիւր կողմն աղբիւ-
րացոյց, զի ինքեամբ ծնցի զմեզ ի ջրոյ
և ի հօգւոյ, և ինքեամբ կերակրեսցէ զմեզ
մարմնով և արեամբն. վասն զի կեանք են
և յարութիւն ի թողութիւն մեղաց նա-
խահօրն մեղաց և մահուան. զայս փր-
կութեան խորհուրդ երկուս, և ի սկզբան
լինելութեան կենդանեաց սպասաւորեաց
բանն. նախ ջուրցն հանել զեռունս շնչոց
կենդանեաց զմկրտութիւնն նշանակելով
որ յաղագս կնոջն յանցանաց, երկրորդ
ի յերկրէ հանեալ շունչ կենդանի, զյա-
րութիւնն որ Քրիստոսիւ ընդհանցաւ յա-
ղագս առնն յանցանաց:

Զայս երկուս փրկութեան խորհուրդս
և յառաջագոյն ստուերագրեաց Աստուած
յիւրայեղ, և յերկուս բռնաւորան յեզիպ-
տացին և ի բարեւալցին, յեզիպտացին վասն
կնոջն յանցանաց, և ի բարեւալցին յաղագս
առնն զատապարտութեան: Պատմութեամբք
անցից և յառաջաձայնութեամբք սաղմո-
սաց և մարգարէից. և ի լրման ժամանա-
կիս կատարեաց ինքեամբ փրկիչն զոր
ճշմարտեն աւետարանչացն ձայնք, առա-
քելոցն քարոզութիւնք:

Բայց ինձ վերստին դառնալ է ի խոր-
հուրդ աստուածային ընթերցուածոցն. և
ցուցանել թէ զիարդ եկեղեցի Քրիստոսի
երկուս զայս կատարէ տօնս նոյն պատ-
մութեամբք. և կամ որպէս զմի մի տաւն
երկրորդը հանդերձ կատարէ, և զմինն
ի միւսումն աղօտացուցանէ և թէ զիարդ
երկու տօնքս այլոցն հիմունք հաստա-
տեալ են. և կամ թէ որպէս քառասնե-
րորդ պահոցն աւուրք յինն խորհուրդ բա-
ժանեալ են: Եւ թէ որպէս չորեքշաբաթքն
և ուրբաթքն, ընթերցուածովքն և սաղ-
մոսիւք ի նոյն խորհուրդն միանան, և
կամ որպէս երկու քառասներորդը նոյն
պահքն կատարին աւելի ընթերցուածովք.
և կամ զինչ խորհուրդ անընթերցուած
առաջաւորացն պահքն. և կամ թէ զի
երկու շաբաթուր զատուցեալ. և թէ զի
նոյն ընթերցուածք կրկինն. և որպէս ըն-
թերցուածք և սաղմոսք աղուհացիցն ի
զատկին ընթերցուածս և սաղմոսս առնուն

1. Հոս թերթ մը ինկած է: (ԳԼ. Է.)

կատարումն, և յառաջին արարչութիւնն վերստին նորոգին արարածը Քրիստոսիւ. և աստ է երկիւղ մեծ, զի դու տէր ես երազասիրտ և ողորկ բանից սովորական. և իմ բանս ծանրաշարժ է և խոշորագոյն, և պէտք բանիս պահանջեն զերկայնութիւն, բայց ապա զի դու ես պատճառք համբերեալ այսմ ո՞ խոհեմագոյն դու և իմաստուն տէր և զիտա, զի որպէս ի նկարագրութիւնսն ոչ որ զպայծառութիւն գեղոցն ունի, այլ որ զչափաբերութիւն յօդաչափութեանն նա է գովելի, նոյնպէս և ոչ որ ողորկութեամբ և երգագրութեաց՝ բանին եղծանէ զմիտս բանին:

Այլ որ խոշորութեամբն առաւել յայտնէ. թէպէտ և յուշախաղաց է պատուելի է. այսպէս և որ համբերէ խոշոր բանի որ զմիտսն բերէ լաւագոյն է, թէպէտ և երկայնութեամբն վտանգի. քան որ թեթեւութեաց և ողորկ բանին ունայնացեալ զնայ:

Ը². — Թե որպէս աստուածայայտնութեանն տօն և յարոշութեանն միմեանք աշարտին ի միմեանս, և առանց իրերսց կիսակատարք ևն:

Ձայս երկրորդ անգամ դարձեալ մտի ի դրախտն աստուածային ընթերցութեան բերել քեզ զմնացեալ պտուղ տեսութեան բանիս:

Եւ զոր օրինակ որք ծանրութեան բեռանց ոչ զօրեն բերել, ի մասունս, ըզբեռնն բաժանեն և դարձիւք կրեն. և այնպէս ընուն զթերութիւն տկարութեանն իւրեանց. այսպէս և իմ բանիս ոչ կարացեալ միանգամայն բառնալ զխորհուրդ փրկութեան ընթերցութեանն բաժան[ե]ցի յերիս հատուածս երիւք խորհրդովք. յորոց զմինն ընծայեցի լսասիրութեանդ քո, և զերկրորդն հանդերձեցա[յ] ընուլ քեզ: Եւ վասն զի առն և կնոջ փրկութեան խորհուրդ են երկու տօնքս ծննդեանն և յարութեանն Քրիստոսի, յիրաւի եկեղեցի Քրիստոսի ի միասին տօնէ զնոսա միմեամբք, զի զոր օրինակ հարսանեաց ու-

րախութիւն հարսինն և փեսային անվայելուչ են առանց միմեանց ուրախանալն, վասն զի միմեամբք ընու խնդալն նոցա նախ ի կնոջն տան փեսային. որ զնայ առնուլ զնա և դառնալ. և ապա ի տան փեսային կնոջն. զոր և ի Քրիստոս Աստուած է տեսանել փեսայացեալ մարմնովք, որ նախ եթող զհայրենի տունն, և եկն առ հարսնացեալ եկեղեցի իւր զոր յառաջագոյն խօսեցեալ էր մարգարէիցն Քրիստոսի՝ իբրեւ զկոյս սուրբ հաւատովք յերկրի երեւելով և ընդ մարդկան շրջելով. որ փառօք և պատուով պսակեցաւ. և ուրախ արար զեկեղեցի յիւրում տան ի յայտնութեանն և ի յարութեանն իւրում. և ապա տարաւ յօթեման փառաց տան հօր իւրոյ, զի հանապազ տեսանիցեն զփառս նորա, ընդ նմին յարուցեալք և նստեալք յերկնաւորս ի Քրիստոս: Այսպէս և աստ իմանալ է նախ ի կնոջն փրկութեան տօնի ծննդեամբն Քրիստոսի, ուրախանալ և առնն յարութեամբն իւրով, որպէս և ի զատկին տօնի, ուր փրկութիւն առնն յարութեամբն Քրիստոսի, զուարճանալ և կնոջն ծննդեամբն աւագանին. և յանդիման տեսանել միմեանց զկործանումն բռնաւորին իւրեանց, որ է Սատանայ:

Բայց մի ծանծրութիւն թուեսցի ձեզ բազում անգամ զնոյն բանս փրկութեան կրկնաբանելովս այլ զոր օրինակ զսիրամարգին թե որքան շրջշրջեան այնքան երփն երփն զեղեցկութեանն զառաջին տեսեալն մոռացուցանէ, այնպէս և խորհուրդ ընթերցութեանն որքան յեղյեղուս բանիւ, այնքան պայծառացուցանէ զխորհուրդ փրկութեան մերոյ:

Արդ տօնէ եկեղեցի Քրիստոսի զխորհուրդ փրկութեանն մերոյ մեծապայծառ վայելչութեամբ երկուս տօնս զծնունդն Քրիստոսի և զյարութիւնն և զնէ հիմունս երկոցուն տօնիցն զիսկզբանէ ընթերցութեան իբրեւ զաղբիւր յորդարուղիս ամենաբարի

1. Հաւանօրէն «երգութեաց». բաղդատէ՝ քիչ վերել:
2. Ը. զլուսը կրկնուած է:



Հայկական Գրչագիրք

Մատենադարան Ս. Ղազարու

Ս. ՄԱՐԿՈՍ ԱՒԵՏԱՐԱՆԻԶ

35. — Աւետարան Տիրիկի, Թ. 1591, ամ գրչութեան 1469

SAINT MARC

Tetraévangile de Divrik, N. 1591, an 1469

արարչութեամբն Աստուծոյ առ մարդն. որով չարն խանդացաւ և դատապարտեաց զմարդն յորս առաւել ծաւալեցաւ մարդասիրութիւնն Աստուծոյ ներելովն:

Եւ հանէ ի վերջէ ընթերցուածին երկուս վտակս կենաց ըստ յանցանաց արուին և իզին. իզին զկոչեացն Ադամ զանուն կնոջ իւրում կեանս. և արուին զպահելն զճանապարհս ծառոյն կենաց: Եւ նախ տօնէ զճնունդն Քրիստոսի և զյայտնութիւնն. յաղագս կնոջն փրկութեան և ծննդոցն և սկսանի ի կեանս կոչելոյ զկինն օրինակաւ և անցանէ ի կոյսն յղացեալ որ և ծնաւ զճմանուէղն ուստի ճշմարտապէս կեանք ծագեցան: Եւ զայ ի մկրտութեանն ընթերցուած ընկղմելով զանմարմին Փարաւոյնն որ ջրահեղձոյց զտղայսն առնէր զի ուրախութիւնն որդւոց մարդկան վերստին ծննդեամբն, և կանանց ազգի պարգեւեցէ փոխանակ հեծութեամբ ծննդեանն որով ելին իսկ զհետ Մարիամա [յ] անիծիցն յօրհնութիւն: Եւ երգէին զյաղթութեանն օրհնեղութիւն և ապա ընթեռնուն ընթերցուածը որ յաղագս առնն փրկութեան է ցուցանելով զաստուածական իշխանութիւնն Քրիստոսի ի Հօրէ և յազգէ Յուդա [յ] ըստ մարմնոյ որ հովուէ վարդապետութեամբ և մկրտութեամբ շնորհաց հոգւոյն և ազգի ազգի բժշկութեամբը զոր յայլ ընթերցուածսն գտանես:

Իսկ զհամբերութիւն չարչարանացն և զմահ խաչին և զյարութիւնն և զվերստին նորոգումն հրէից և հեթանոսաց և զհանել ի բանտէ կապանաց այսինքն ի դժոխոց զորդիս մարդկան ի Յակովբ ծառայ իմ զոր ապա պատմեցից ըստ իւրաքանչիւր ընթերցուածոց: Իսկ փրկելոյ ի հրոյն և և ձեռաց դժոխոց զմեզ և զսատանայ ի հոլը երթալ և մարդոյս ամենայն արաւածովք ի նոյն օրհնութիւն հաստատել յամի աթուտաներորդի ընթերցուածն: Նոյնպէս և յարութեանն տօնին առաջի զխաչին և զյարութեանն խորհուրդն է յաղագս առնն և ապա զմկրտութեանն վասն կնոջն: Եւ սկսանի ի նոյն ընթերցուածոյ ի ծառոյն կենաց և զայ ի ծառն

Սարեգայ զորմէ խոյն կախեցաւ որ է Քրիստոս գառնն Աստուծոյ ի վերայ խաչին. և յիշելով զհեղումն արեամբն գառինն Քրիստոսի անցանէ ի թաղումն և յարութիւնն Քրիստոսի և ի քարոզութիւնն ի ձեռն Յովնանու ընթերցուածին: Եւ ապա զայ ի մկրտութիւնն որ յաղագս կնոջն յառաւօտին պահուն ընթերցուածն և ըզնոյն խորհուրդ կատարէ զոր ի յայտնութեանն ցուցար. նոյնպէս և այլ ընթերցուածովքն գտանես զլուսաւորութիւնն եկեղեցւոյ և զաւետիս մարդկան առ Յովբ Աստուծոյ երեւմամբն և զհամարարձումն Քրիստոսի և զխոստումն և զգալն յառաքելսն և զերկիրն պարգեւաց ի հանդերձեալսն և զյարութիւնն մեռելոց և զկործանումն դժոխոց և զանկումն սատանայի ի հոլըն յորմէ փրկեաց զմեզ Միածին Որդին Աստուծոյ և ի նոյն փառարանութիւն հաստատեաց զմարդն ամենայն արարածովք զոր և զայդ յիւրում կարգի ըստ իւրաքանչիւր ընթերցուածի պատմեցից: Եւ այսպէս ի միմեանս շարազրեալք երկոքին տօնքս մի ի միւսումն ոչ ծածկի և ոչ յայտնի բայց զիտողաց:

Թ. — Թե գիտող երկու տօնքս այլոց հիմունք հաստատուող են և քե ծնունդն և մկրտութիւնն մի տօն հոգեւոր է:

Եւ եղեալ են սոքա հիմունք ամենայն տօնից Քրիստոսի զոր օրինակ երկու տախտակքն Մովսէսի աստուածախրականն և ընկերախրականն ամենայն օրինաց և մարգարէից որ ի նոսա կախեալ կան, որպէս և փրկիչն ասաց և է այսպէս:

Յաւետեաց կուսին մինչեւ յաստուածայայտնութիւնն յաղագս կնոջն իմանալի է, իսկ յաստուածայայտնութեանն նշեւ ցհամարարձումն յաղագս առնն. իսկ զծնունդն և զյայտնութիւնն մի տօն կատարէ եկեղեցի վասն զի միոյ Աստուծոյ մի ծնունդ հոգեւոր փրկութեան մերոյ մի տօն կատարի. որպէս և Աստուածարան ցուցանէ աւելով. երիս ծնունդս մեզ բանն գիտէ. զմինն փշմամբն և զերկրորդ մարմնանալովն և մկրտութեամբն ի մի ծնունդ թուէ,

և զերրորդն յարութեամբն: Որպէս և Մաւար Երուսաղեմի Հայրապետն յիւրում խրատական թղթին ի Հայս Յաղագս Մկրտութեանն թէ ի միում աւուր տօնեմք զծնունդն և զմկրտութիւնն: Նոյնպէս և մեր Լուսաւորիչն ի տօնահրաման կարգին մի տօն ցուցանելով թէ տօնն յայտնութեան ի վասն: Չոր և յառաքելական կանոնին թէ կարգեցին առաքեալքն և եղին հաստատութեամբ թէ տօն ծննդեան և յայտնութեանն յունւարի վեցն կատարեսցի: Եւ զոր օրինակ մահն և թաղումն առանց յարութեան անկատար է, նոյնպէս և ծնունդն առանց մկրտութեանն և որպէս ի յարութեանն ընթերցուածսն նախ զխաչն և զթաղումն պատմէ և ապա ի վերայ ամէ զյարութիւնն և այնպէս կատարէ զփրկութիւնն. նոյնպէս և աստ նախ զծնունդն սկսանելով ի մկրտութիւնն աւարտեն:

Որպէս Աստուածարան ի յայտնութեանն սկսանելով ի ծնունդն կատարէ, աւելովն. այժմ Աստուծոյ յայտնութեանն տօն է և ապա ամէ ի վերայ, քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ. որպէս և ի սկզբանն. վերագրէ ի յայտնութիւնն տեառն. և սկսանի Քրիստոս ծնեալ լինի. և զարձեալ զի եթէ ծնունդն առանց յարութեանն կիսակատար է. և յարութիւնն առանց նորա, որպէս և ցուցաւ յառաջագոյն. զի որպէս ի սկզբանն ի ստեղծուն զայրն, կիսակատար առ ի լինելութիւնն մեր, թէ ոչ իցէ ընդ նմա խորհուրդ կնոջն ի կողն. նոյնպէս և լինել կնոջն առ առնն միաւորութիւն հայի կատարումն շինուածոյն զի այնպէս եղիցին մարմին մի. թէ պէտ և հատոր ոգւոյ ասի. այսպէս և փրկութեան տօնքս ծնունդն Քրիստոսի որ յաղագս կնոջն առ յարութիւն առնն հայի. նոյնպէս և յարութիւնն Քրիստոսի որ յաղագս առնն առ կնոջն սրբութիւն. զի եղիցին երկոքին միմեամբք մաքրեալք. զմի փրկութեան խորհուրդ ծնանելով, թաղեալք ընդ նմին մկրտութեամբն ի մահ: Չի թէ այսպէս միմեամբք եղեալքն և ի միասին մեղուցեալք. միմեամբք և փրկե-

ցան Քրիստոսի որպէս և յայտնեն ընթերցուածքն: Ապա որչափ եւս առաւել զմիոյ որդոյն ծնունդն ի կուսէ հոգւով սրբով. յաղագս առաջին կնոջն և ծննդոց նորա և ի Յորդանան մկրտեալ իջանելով սուրբ Հոգւոյն յաղագս մեր և կնոջն ծննդեամբ յաւագանէ. անդ որդի իմ ես դու ես այսօր ծնա [յ] զքեզ յաղագս կնոջն և մեր. և աստ դա է որդի իմ սիրելի յաղագս մեր և կնոջն: Չմիոյն յանցաւորի փրկութիւն մի տօն կատարել պարտ է, թէպէտ և կատարումն ամացն յերեսուն ամի ի նմին աւուր կատարի:

Ժ. — Թե որպէս յորեքշաբաթն և ուրբաթն ընթերցուածովքն և սաղմոսիքն ի նոյն խորհուրդ յայտնուրեան և յարարեանն միմեան:

Նոյնպէս և աղուհացիցն ընթերցուածք ի սոսա բաժանին: Չորեքշաբաթին վասն Եւայի յաղագս ծննդեանն տօնին յիւր յայ են անուանքն որդւոցն իսրայելի և կատարին յառաւօտին պահու:

Եւ վասն զի ստուեր հանդերձելոց բարեացն ունէին¹ օրէնքն Մովսէսի և ժողովրդեամբն, օրինակ է Եգիպտոս պանդըխտութեան աշխարհիս, զերծեալք ի փայտէն կենաց, սովովն և որով փախուցեալք ի սա. Փարաւոյն սատանայի գործավարն զիւաց. գործն մեղաց. ջրահեղձոյց զտղայսն առնել. յաղագս կնոջն յանցանաց ի պիղծ պաշտամունսն որ ի ջուրսն թագաւորեցելոյ վիշապին:

Նոյնպէս և Մովսէս և Մովսէսի ծնունդն և գործքն Քրիստոսի յուսոյն որ ի կուսէն. ժողովուրդն եկեղեցիս. ամպն Հոգւոյն. ծովն մկրտութեան. ընկղմելն Փարաւոյնի և զօրացն. աւագանաւն կործանումն սատանայի և իւր զօրացն. օրհնելն Մովսէսի և որդւոցն իսրայելի և կանանցն զհետ եւ լանել Մարիամու հարօղին յաղթութեան զթմրուկն օրհնեղութիւն եկեղեցւոյ ի ձեռն Մարիամու Աստուածածնի որով կանանց ազգ վերստին նորոգեցաւ ի փառս

1. Ունեին:

և ի գովովածին արարչին. զոր և մարգարէիցն ընթերցուածք. խորատուր և յորդոր մամբը առ նոքօք խիզախեն փարաւովնի և Եգիպտոսի:

ՉՄովսէս ածելով անդր և յանդիման առնելով փարաւովնի. և ժողովրդեանն խրախոյս տալով. որք ի վախճանին ասեն. Ուրախ լին յոյժ դուստր Սիոնի. թագաւոր զայ քեզ որ է Քրիստոս զաւով յերուսաղէմ և խորտակեաց զկառս յեփրեմայ որպէս և այժմ տեսեալ զմարգարէութեանն իւրեանց կատարումն:

Ասեն յեկեղեցի. Լուսաւորեաց Լուսաւորեաց Երուսաղէմ զի հասեալ է լոյս քո:

Նոյնպէս և զուրբաթուն ընթերցուածսն ի վերայ յարութեան տօնին կարգեալ է վասն Ադամայ յանցուածոցն յերկրորդ օրինաց. Լուր իսրայէլ. որ յուշ առնէ զանհնազանդութիւն մարդոյն առ պատուիրանն:

Եւ զարձեալ ի հնազանդութիւն յորդորէ. և խոստանայ զերկիր պարգեւաց. զառաջին բարութիւնսն զոր քանանացիքն դեւք. և թագաւորն սատանայ յափշտակեցին զոր անդրէն խոստանայ տալ և ոչ եւս հրամայէ դնել ընդ նոսա դաշն. և ոչ մի իւրիւրօք, այլ ի սպառ պահել թշնամութիւնն. և կատարի այս խորհուրդ ի Յեսու:


Արդ յարուցեալ անցցես ընդ այդ Յորդանան դու և ամենայն ժողովուրդ յերկիր զոր ես տամ, զոր ետ Քրիստոս եկեղեցւոյ:

Նոյնպէս և Յորայ ընթերցուածքն զանցս կրիցն Ադամայ. և որդւոց նորա յայտ առնեն, և զմահուան. և կատարին յով է զայն որ թաքուցանէ յինչն զխորհուրդս. ի բանայցն քեզ ահիւ դրունք մահու ի բաւապանաց դժոխոց ի տեսանել զքեզ սարսիցեն. թէպէտեւ մասնաւոր ի Ղազարու յարութիւնն կատարի. որպէս մարգարէիցն մխիթարական բանք Քրիստոսիւ ըստ վիրացն և հիւանդութեան ի բժշկութիւն ուրբաթունքն ի շաբաթսն. իսկ ըստ մահուան ի յարութիւն Ղազարու կատարի. նոյնպէս և սպառնական բանք դստեր բարեւարցոցն զայս միտս ունին. զի որպէս փարաւովն ջուրց վիշապ կոչի յաղագս ջրահեղձոյց զմանկունսն առնելոյ: Որպէս ասէր մարգարէն վիշապդ մեծ որ նստիս ի մէջ գետոց և ասես գետքս իմ են: Նոյնպէս և բարեւարցի բռնաւորն որ գերեաց զիսրայէլ յամս Քրիստոսի վիշապ կոչի յաղագս շնոյ զերկիր դիակամքը կռապաշտութեան. որպէս և մարգարէն ասէր. Եկու զիս վիշապն ահագին, եկեր զիս, բաժանեաց զիս, որ է սատանայ մահուամբ զորդիս մարդկան զոր և Եսայի ասէր թէ զօրացաւ մահ և եկու:

Չայս¹ և ժողովուրդն յայտնապէս ասէ ի բարեւոնի թէ հատաւ յոյս մեր և մեռաք որ է ըստ առաջին մարդոյն յանցանաց: Արդ սպառնայ մարգարէին մահու և որ զիշխանութիւն մահուն ունէր սատանայի. թէ հանից զոր եկուն ի բերանոյ նորա որ կատարի յեղեկիէլի մարգարէութիւնն թէ հանից զձեզ ի գերեզմանաց ձերոց և տարայց յերկիրն իսրայէլի զորոյ խոստման և զկատարումն պատմէ թէ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս. և ջիղք և միս և մորթ պատեցան և եմուտ շունչ և կենդանացան կացին ժողովուրդը բազումը յոյժ յոյժ. և որ ինչ յետոյ:

Նոյնպէս և խայտառակումն դստերն Բարեւովնի և այրեցումն ի հուրն քաղդէացւոցն որ է սատանայ զօրօքն իւրովք ի նաբուզոդոնոսոր և ի քաղդէացիսն կատարի: Իսկ եկեղեցւոյ անարատ պահել ի հրոյն յաւիտենից զոր պատրաստեալ է սատանայի, երեք մանկունքն որ ապրեցան որդւովն Աստուծոյ. որ երգակից արար զմեզ ընդ հրեշտակս, քակելով զմիջնորմն ցանկոյն. լինելով ինքն զլուսն անկեան, հաւասարեաց վերստին զնիւթական աշխարհս առ իմանալին ամենայն զարդուն իւրով որպէս ի սկզբանն. յորմէ մերժեալ տրտմու-

նդհակառակն աւելի յառաջացեալ է բոլորքի ձեւը բաց ի ինչ ինչ ձեւերէ որ դեռ կ'երեւին:



Մատենադարան Ս. Ղազարու:

2089 ԽՈՐԱՆՆԵՐ
36-37. — Ստամբուլ, 1818, գրչութիւն ժէ դարու
TABLES DES CANONS
Tetraevangile, N. 1980, XVII Siècle

Հայկական Գրչագիրք

1. Ասկից սկսեալ զբոլոր կը փոխուի, առաջ որ երկաթագրէն բոլորքի նախնական անցքը մը կը տեսնուի, ուր դեռ զրեւը բոլոր միեւնոյն մեծութեամբ են, հոս

թիւնը և հեծութիւնը որ յաղագս սկընա-
մօրն և մահ և ապականութիւնը որ յա-
ղագս նախահօրն յորդուոց նոցա ապակա-
նեցան և Քրիստոսի վերստին նորոգեցան
ի փառս և ի գովութիւն արարչին: Վասն
որոյ յամենայն արարածոց՝ օրհնեն, գո-
վեն և փառաւորեն զբարեգործն Աստուած
զի փրկեաց զնոսա ի դժոխոց և ի ձեռաց
մահու ապրեցոյց գոհանալով զի յաւի-
տեան է ողորմ նորա:

ԺԱ. — Թե որպէս ըստ իշխանիւնի ստղ-
մասաց և ընդերցուածոց տօնքն յիշա-
քանչիւր տեղիս խորհրդարար կատարին.

Դարձեալ երեքնեցի ի նոյն բուրաստան
ընթերցուածոցն. հանել քեզ զեւս մնացեալ
իմոց խորհրդոցս տեսութեան պտուղս զի
ծանիցես զանազան պարգուծիւն զիմոց
մտաց առ քեզ երեւեալ: Ո՛վ Պահպանեան
կամսարականդ. զի երկուս երկուս ընդ նոյն
խորհուրդ անցանելով ութուտասնիցս յեղ-
յեղմամբ բանիս. ըստ իւրաքանչիւր սաղ-
մոսաց և ընթերցուածոց բովանդակեցից
առ քեզ զխորհրդական պատմութիւն հար-
կիս: Արդ ժողովեալ ի հովուանոցն եկե-
ղեցի Քրիստոսի. տօնէ նախ յաղագս կնոջն
փրկութեան զաւետիս հրեշտակացն առ
հովիւան եղեալ թէ Ծնաւ ձեզ այսօր Փրը-
կիչ: Եւ ասէ. Տէր հովուեսցէ զիս. վասն
զի վայելէր իսկ քաջ հովուին որ եթող
զիննսուն և զինն ոչխարն զդասս հրեշ-
տակացն և եկն ի խնդիր մոլորեալ ոչխա-
րին. մարդկային բնութեանս առ հովիւան
նախ առաքել զհրեշտակս: Վասն Դաւթի
սիրելոյ իւրոյ, որում երդուաւ. ի պտղոյ
որովայնէ նորա նստուցանել յաթոռ նո-
րա. զոր առն ի հօտէ խաշանց հովուել
զՅակոբ ծառայ իւր. որ ասէրն փոխանակ
նախահօրն ընդ ամենեցուն. Մոլորեցայ ես
որպէս զոչխար կորուսեալ. խնդրեայ զծա-
ռայ քո. զի լուեալ զայսպիսի աւետիս փո-
խանորդաց նորա հովուացն վաղվաղակի
խնդութեամբ ասասցեն. թէ Տէր հովուեսցէ
զիս և ինձ ինչ ոչ պակասեսցէ. ի վայրի
դաւարեալ. որ եւ յաստուածային օրինացն
ծաղիկս, անդ բնակեցոյց զիս և ի ջուրս

հանգստեան աւազանին սնոյց զիս. և
դարձոյց զանձն իմ առ իս ի մահուանէ
և ի ծառայութենէ մեղաց և որ այլեւս
խնամքն. որպէս և միւս սաղմոսն զյառա-
ջագոյն խնամոն յիշեցուցանէ առ Խարայեղ
ասելով. Որ հովուեսցէ Խարայեղի նայեաց.
և որ նստիսդ ի քրովքէս յայտնեայ, և
Աստուած զօրութեանց դարձոյ զմեզ.
երեւեցոյ զերեսս քո ի մեզ և կեցցուր:
Եւ ապա զճշմարտութիւնն փրկութեանն
աւետարանան պատմեն՝ թէ Ծնաւ ձեզ
այսօր փրկիչ որ է օծեալ Տէր ի քաղաքի
Դաւթի. զոր ծանուցեալ հովուացն փութա-
նակի զալստեամբն ի նշանաց հրեշտակին
զմանուկն փառաւորեցին զԱստուած՝ ընդ
զօրաց երկնաւորաց որ ասէին. Փառք ի
բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղու-
թիւն: Եւ ապա ժողովեալք առ մարմն
մարգարէութեամբ սաղմոսաց զԾնունդն
պատմեն. Տէր ասաց ցիս, որդի իմ ես դու.
ես այսօր ծնայ զքեզ: Եւ զի մի կարծիցի
ի Մարիամայ սկիզբն առնուլ յաղագս
այսօրն ասելոյ. յարեն ի նոյն զմիւս սաղ-
մոսն որ պատմէ զանսկզբնութիւն առ ի
Հօրէ թէ Յառաջ քան զարուսեակ ծնայ
զքեզ. և ապա զճշմարտութիւն աւետարա-
նին՝ թէ Յիսուսի Քրիստոսի ծնունդն էր
այսպէս. և որ յաղագս կուսին ծննդեանն
պատմի: Եւ ապա յիշեն զանսուտ խոս-
տումն Աստուծոյ երդմամբ առ Դաւիթ
կատարեալ և ասեն. Յիշեա՛ Տէր զԴաւիթ.
զոր և հրեշտակն յաւետիս հովուացն թէ
ի քաղաքի Դաւթի ծնաւ փրկիչն նոցա.
գնոյն և Դաւթի[1] Յովսեփու յիշատակէ՝
թէ Որդի Դաւթի մի՛ երկնչիւր առնուլ առ
քեզ զՄարիամ կին քո. զի որ ի նմանէ յղա-
ցեալ ի Հոգւոյն սրբոյ է: Եւ ապա ընթերցուն
զպատմութիւն ամ... արի՛ արարչութեանն
գործոց և կրից մարդոյն. յորում և նկա-
րագրութիւնը խնամոցն Աստուծոյ առ կինն,
ազդեալ մարգարէութեամբ ի ձեռն Աղա-
մայ կոչել զանուն կնոջ իւրոյ կեանս.
գիտելով թէ որպէս մահ ի կնոջ է, նոյն-

1. Այսինքն՝ ի զիմաց ամենայն արարածոց:
2. Անընթեռնելի. հաւանօրէն ամենաբարի:

պէս և կեանք զոր և մարգարէն յառաջ-
մատուց՝ վկայէ. թէ ահա կոյս յղասցի և
ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա Եմ-
մանուէլ որ է Ընդ մեզ Աստուած: Զոր և
միւս ընթերցուածն պատմէ ճահողապէս,
Մարիամայ առնուլ թմրուկ խնդութեան և
ամենայն կանանց ելանել ուրախական
պարուր յառաջին անիծիցն և ի տրտմու-
թեանցն զհետ նորա. ուր յառաջէ Մարիամ
զյաղթութեան նուագն երգելով կուսածին
թագաւորին զոր և որդիքն Խարայի ի
Մովսէս որ է բովանդակ եկեղեցւոյ փրը-
կութիւն, թէ Օրհնե[ս]ցուր զՏէր զի փառօր
է փառաւորեալ. զհեծեալ դեւան յերկարս
է մեղացն ընկէց ի ծով ի մկրտութեան ա-
ւազանին, փոխանակ մերոց տղայոցն ի
գեան. զմեծն փոքուն արար հատուցումն, և
զայս ցնծութեամբ օրհնաբանեալք զկնոջն
փրկութիւնն: Եւ ապա ընթերցուն. Եւ դու
Բեթղէմ յաղագս առնն փրկութեան որ
յուցումն տեղոցն ուր ծնաւ մանուկն ըստ
մարմնոյ իշխան՝ յազգէն Յուդայ և ելք
նորա ի սկզբանէ աշխարհի առ ի Հօրէ,
և այլ թագաւորական և հովուական խը-
նամբ: Եւ ապա՝ ճանաչել զիմաստութիւն
և զխրատ ծանօթութիւն եկեղեցւոյ իմաս-
տութեան խնամոցն որ ծածկեալ էր առ
Աստուծոյ ի Քրիստոս և խրատուն առ
մարդն առաջին՝ Զի զոր սիրէ Տէր խրա-
տէ. զի ընդունելութեամբ զբանս հանճա-
րոյ և ունկնդրութեամբ հնազանդութեան
պսակ շնորհաց ընկալցի զլուսն և մա-
նեակ ոսկի պարանոցն:

Իսկ նորա կամէին թէ հրձիգ լեալ էին՝
նախանձ քահանայապետացն և դպրացն
և թէ Ծնեալ մանուկս որդի և տուեալ մեզ
Աստուած հօր է և հայր հանդերձելոյ
աշխարհին և իշխանութիւն ի վերայ ու-
սոց խաչին և յարութեամբն և թէ ոչ
նախանձու այլ խաղաղութեան և առող-
ջութեան թագաւոր է: Եւ բղիսեցէ զաւա-
զան թէ կուսածին ծաղիկն ունի հանգու-
ցեալ յինքեան գեօթն շնորհս Հոգւոյն որով

ի մի միաբանութիւն ճարակին զանազան
ազգք մարդկան և մակաղին որպէս եզն
և արջ և այլքն և ինձ առ ուլոյ հանդար-
տացեալ ի ձեռն աւազանին որոյ գիտու-
թեամբ լցեալ լինին իրեւ զջուրս բազումս
որ ծածկեն զծովս: Իսկ զօրացարուր ձեռք
լքեալք՝ բժշկութիւնը պէսպէս ախտից մե-
րոց զոր ինքն Աստուած զալստեամբն արար
կաղաց, կուրաց, գօսացելոց, համերց և
այլոցն ամենեցուն նոյնպիսեաց և ուրա-
խութիւն հաւուց հրեշտակաց և մակաղա-
տեղը խաշանց արդար մարդկան. և մկր-
տութիւնը վարդապետութեամբ աղբւրա-
ցեալք և գետացեալք հեթանոսաց: Իսկ
Ահաւասիկ Աստուած մեր հատուցանէ՝ հա-
տուցմունք իւրաքանչիւրոցն խնամք աս-
տուածական հովութեանն՝ բազկաւ իւրով
ժողովել և ի ծոց իւր կրել զմեզ անչափե-
լի զօրութեամբն որով զլերինս և ըզ-
դաշտս կշռէ և թգաւ և քաւ զերկինս և
զերկիրս ասի չափել. ընդ որոյ տնտեսու-
թիւն հիացեալ հրաշանայ մարգարէն թէ
ով զիտաց զմիտս Տեառն: Սոյնպէս և Յա-
կոր ծառայ իմ՝ իրաւարարութիւն հեթա-
նոսաց և հեգութեամբ լուծութիւնն առաջի
ջաղջախեալ և առկայծեալ քահանայապե-
տիցն, Պիղատոսի և Հերովդի զոր ոչ երեկ
և ոչ շիջոյց. և կատարումն աստուածա-
կան տնօրէնութեանն զոր համբեր խաչին
և ծագեաց յարութեամբն ի գերեզմանէն
և յանուն նորա հեթանոսք յուսացին. և
հհան ի բանտէ և ի տանէ կապանաց, այս
է ի գերեզմանաց և ի դժոխոց զկապեալ
զհոգիսն և զմարմինս յիւր արքայութիւնն:
Իսկ Յամին ութուտասներորդի խափա-
նումն մահու և կործանումն չարին և փրը-
կութիւն մեր ի ձեռաց դժոխոց և ի հրոյն
յաւիտենից:

1. Այսպէս ունի Զ-ը:

2. Ասկից սկսեալ կրկին կը փոխուի զբնութիւնը.
տարբեր երկու նախորդ ձեւերէն զորս նշանակեցինք վերեւ:

3. Այսպէս ունի Զ-ը. փոխ. հովութեանն: